



34. ԱՂԴԻԼԱԿ

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի մարդ, մի կնիկ, Սրանք ունենում են մի մինումար տղա: Էդ տղի անումը Աղդիլակ ա ըլնում: Իրանք էլ շատ գառն-աղքատ, բյասիր, անճար են ըլնում. մի եզն են ունենում, մըն էլ մի էշ. դե որշպար մարդիկ ին, մի արտ էլ ունեին, վարում ին, ցանում, տան հացն էլ ընդիան էր գալի, սրանով գլուխ ին պահում: Հնձի վախտը էս մարդը էթում էր խալխի հմար փոխարա բանում, որ նրանք էլ իրա արտը հնձելիս դային իրան օգտիին:

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբթ, հունձն ընկնում ա. էս մարդը էթում ա մի քանի օր խալխի հունձն ա անում. վերջը սրեն գալիս ա սրա արտին: Թոփի են ըլնում մի տասը-տասնըհինգ հոգի, մննում են նրա արտը, որ հնձեն: Գալիս ա հացի վախտը, էդ մարդը Աղդիլակին դրկում ա տուն, որ հաց բերի հնձվորի հմար:

Աղդիլակը վազեվազ էթում ա տուն, մորն ասում.— Նա'նի, ափին ասում էր. «Մեր եզը մորթե՛ք, խորոված արեք, հնձվորին հաց բերե՛ք»:

— Ա՛յ որդի, — ասում ա մերը, — զժվե՛լ ես, ցնդե՛լ ես, ինչ ա. մենք ենք՝ էս մի եղը, ըն էլ մորթե՛նք: Ես, — ասում ա, — հընձվորի հացը հազրել եմ, հրես վե՛ կալ, տա՛ր. էլ ե՛զը խի ես մորթում:

— Զէ՛ որ չէ, — ասում ա Աղղիլակը, — պտի մորթեմ, որ պտի մորթեմ:

Մերը ինչքամ աղաշանք-պաղատանք ա անում, կովում ա, բշտում ա, ճար, իլլաճ ջիլնում: Տղեն էթում ա եղը վե քցում, գանակը քաշում մորթում, քերթում, կաշին ջոկ ծալում՝ վե դնում, միսը մանդր կոտորում, եննա էթում ա շշերը քերում, շարում, տանում թունդիրը կախ անում, որ խորովի՝ էն սհաթը հերը գուգոռալն, անծելոն տուն ա մննում:

Ո'տդ կոտրի, ո'տդ, — ասում ա հերը, — ես քեզ հացի ղըր-կեցի, էսքամ վախտ ի՞նչ էլար. էն խեղճ հնձվորները սոված կոտորվեցին քու ճամփեն պահելոն:

Տղեն էդ որ լսում ա, ձեռի շամփրները քցում ա թունդիրը-մաշեն թունդրի կշտին ա ըլնում, մաշովը թունդրիցը մի կրակ ավեր ունում ու յաշլա դպա արտն ա կրնկում:

Հենց որ հասնում ա արտը, հնձվորներին ձեն ա տալի. — Դո՛ւ էկեք, — ասում ա, — որ արտը կրակում եմ. հրես թագավորը իրադոշնովը գալիս ա, ծիանիքը պտի անեն մեր արտը ուտացնեն:

— Ա՛յ շանըմ, ա՛յ գյողըմ, — ասում են հնձվորները, — շատ էլ թագավորը պտի ծիանիքը անի ձեր արտը, արածացնի, հո սաղ արտը շեն ուտի, խի՛ ես կրակ տալի, բա քու հերնըմերը մեղ-քը չե՛ն:

— Զէ՛ որ չէ, — ասում ա, — պտի կրակ տամ, որ պտի կրակ տամ:

Ասում ա ու կրակը քցում արտի մեջը: Արտը ալրիալը վոթվըռո-թում ա, կպնում: Տղեն էլ էթում ա, արտի գլխին էշը կապած ա-ըլնում, նիլնում ա ու յաշլա:

Սրան թողանք ըստե, գանք խարար տանք սրա հորիցը:

Խեղճ հերը որ տենում ա՝ տղեն եղը մորթել ա, մնում ա գլխի վրեն մոլորած: Ի՞նչ աներ, բանը բանից անց էր կացե. հնձվորի հացը վեր ա ունում, որ ինքը տանի: Հենց դուս ա գալի քուզեն, հնձվորները գալիս են աղաքը:

— Հէ՛, խե՞ր ըլնի, — հարցնում ա, — էս վախտ խի՛ եք էկե:

Հնձվորները ասում են. — Հօե՞նց, ըսե՞նց բան. տղեդ էկավ ար-տը կրակ տվեց, թե թագավորը իրա զոշնովը գալիս ա, պտի ծիա-նիքը անեն արտը, արածացնեն: Էնքամ ասեցինք. «Ա՛յ շանըմ, ա՛յ գյողըմ, մի՛ անի, հերդ մեղք ա», չէլավ, անկաշ շարեց: Սաղ արտը»

կրակ տվեց, ինքն էլ զլովսն առավ, կորավ: Մընթ էլ մնայինք, ի՞նչ
անեինք, վե կացանք էկանք:

— Ա՛յ գետինը մննի, ա՛յ ու փուշ ըլնի, ա՛յ գրողը տանի
նրան,— ասեց հերը բարկացած:— է'կեք, — ասեց, — էկե՛ք հաց
կերե՛ք:

Հնձվորները գալիս են տոմ, նստում, հաց ուտում: Հաց են
ուտում, պրծնում, վեր են կենում, էթում իրանց տները:

Մրանց թողանք ըստե, գանք խարար տանք Աղդիլակիցը:

Աղդիլակն ա՛ էթում ա, էթում ա, հասնում ա մի զեղ, ըտե
մութը զետինը կոխում ա. մննում ա էդ զեղը, մի բուզա բռնում
ա, էթում էթում ա, էթում, մի բաց գուռ ա տենում, էդ գուռը
ժեծում ա: Մի ջահել, սիրում կնիկ ընդիան դուս ա դալի:

— Հա՛րսի, զո՛ւրան,— ասում ա Աղդիլակը, — ի՞նչ կըլնի տեղ
տաս, էս զշեր սըթար անեմ, էն բաշտեն վե կկենամ, էթամ իմ
բանին:

— Զէ՛, — ասում ա հարսը, — շինի. ես ջահել օվլուշաղ, մարդո
էլ գնացել ա առուտուրի, քեզ ո՞նց թողամ դաս մեր տանը քնես.
խա՞լին ինչ կասեն:

Ասում ա ու դուռը շըրըխկալեն քամակիցը հետ ա անում, թո-
ղում էթում իրա բանին: Աղդիլակը տենում ա կնիկը գնաց մտավ
տոմ, ինքն էլ եննուցը դուռը բաց ա անում, ուսուզով մննում հա-
յաթը: Մննում ա, տենում շարդախումը թունդիրը վառած ա, թունդ-
րի կշտին էլ մի մենծ աթարի դեզ կա: Ուսուզով էշը բաշում ա ներ-
սև, դիզի ետևը կապում, ինքն էլ մննում ա դիզի բումը, տափ
կենում:

Էդ կնիկն ա՛ գալիս ա թունդրի վրեն լավ-լավ կիրակըներ ա
էփում, դազ ա տապակում, հալվա ա անում, տանում, դռանը մի
փետե դութի ա ըլնում, դնում էդ դութու մեջը, պահում: Կիրակըր-
ները էփում ա պրծնում, եննա բերում ա մի մենծ պղինձ ջուր ա
լցնում, տանում թունդրի բերնին դափարթմիշ անում: Մի քիչ անց
ա կենում, տենում ա, ըհր՛, թը՛խկ, թը՛խկ՝ քուշի դուռը ժեծեցին:
կնիկը ափալ-թափալ էթում ա դուռը բաց անում:

Աղդիլակը դիզի միջիցը վարավուրդ ա անում, տենում մի ջա-
հել-շիվան, սիրուն տղա հրեն կնկա հեննա մտավ նեքսե: Դու մի
ասի՛ էդ տղեն էդ կնկա սիրեկանն ա ըլնում: Կնիկը տղին աղաք ա

անում, տանում տուն. նստում են, իրար հեննա քաղցր մասլահաթ էն անում: Հենց էզ ճամկահաթի վախոր քուշի դուռը էլի ծեծում էն. էդ կնիկը ալբիալը իմանում ա, որ իրա մարդն ա: Ի՞նչ աներ, ի՞նչ շաներ, տղին որդեք պահեր, որ մարդը բան չփահմեր. բերում ա պարանը կապում դրա միջքիցը, կախ անում ֆորը, մի քար էլ զնում բերնին, նո՞ր էթում ա քուշի դուռը բաց անում: Բաց ա անում, տեսնում՝ իրա մարդը: Փաթթվում ա մարդի նտովը, ուրախանում, աշխարով մին ըլնում: Գալիս են տուն, մարդ ու կնիկ նստում են, իրար քեզ հարցնում, իրար հալ հարցնում, ասում, խոսում, ծիծաղում, խնդում, ջան ասում, ջան լսում:

— Ա՛յ կնիկ,— հարցնում ա մարդը,— բա էսքամ վախտ ո՞նց իր յոլա էթում. ի՞նչ իր ուտում, կիրակուր, զադ ընկնո՞ւմ էր ձեռդ, թե չէ:

— Է՛հ, ա՛յ մարդ,— ասում ա,— ապրում ի, էլի, դե առանց քեզ իմ օրը ի՞նչ պտի ըլներ: Օրը մի կտոր շոր հաց ի գնում աղարսու, բն էլ կու չէր էթում:

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— ես սոված եմ,— հացից-մացից ի՞նչ կա տանը, բե՛ ուտենք, պառկենք քնենք. ես էլ շարդված, բեղարած եմ:

Կնիկը էթում ա դաստախունը բերում քցում, մի էրկու հաց թրջում, մաշկում, էրկու էլ սոխ ա ճղում, բերում զնում մարդի աղարս: Էս որ տեսնում ա Աղդիլակը, սիրտը մրմռում, միսկտում ա. Էն սհաթը էրեսը անում ա իշին, գտակը վեր ունում, պտտում. պտտելու բաշտան էշը զռում ա: Աղդիլակը իշին իրա գտակովն էր զարի տալի. ընենց որ սարվել էր, հենց որ տերը գտակը ժած էր տալի, հենց իմանում էր՝ զարի ա բերում, ալբիալը զռում էր:

— Ա՛յ կնիկ,— հարցնում ա մարդը,— էս ի՞նչ էշի ձեն ա:

— Է՛հ, կրեմ դրա զլուխը. ժամեժամքի վախտն էր, մի տղա փշով էկավ, թե. «Ղարիբ եմ, մի տեղ տո՛ւ քնեմ», շտվեցի. հալբաթ իմ եննուցը թաքուն մտել ա հայաթը, էշն էլ բերե, ընդե կապե:

— Ա՛յ կնիկ, մեղքը չէ՛ր, խի՞ շիր տեղ տալի. գնա՛ կանշագա, զոնաղն ասսունն ա:

Կնիկն էթում ա, տղին կանշում, բերում: Տղեն գալիս ա. «Բար' իրիկուն» ասում, ընդե նստում. էրեսն էլ իշի զիհն ա անում, որ եր ուղենա՛ զռացնի: Նստում են հացի. Աղդիլակը էլի գտակը պտտում ա: Էշը ալբիալը զռում ա:

— Զո՞ր, — ասում ա Աղդիլակը, — շատ բան ունեն պահածք գու պտի խարար տա՞ս:

— Ի՞նչ ա, խի՞ ես բարկանում իշխդ վրեն, — հարցնում ա տանտերը:

— Բա ի՞նչ անեմ. էշս ասում ա. «Ղութու միջին հալվա կա, զազ կա տապակած, խի՞ շեք բերում ուտում, խի՞ եք սոխ ու հաց ուտում»:

— Վա՞յ, քոռանամ ես, — ասում ա կնիկը, — ըսկի մտի՞ս էք, ուրախությունից զլովսս կորցրել եմ:

Էթում ա զութին բաց անում, ի՞նչ կար չկար բերում, դնում մարդի աղաքը:

Խեղճ կնիկը ըստոնք ո՞ւմ հմար էր պահե, ում զսմաթ էլավ:

Հացը որ ուտում են, պրծնում, կնիկն ասում ա. — Քա՞, զուր եմ դրե թունդրի վրեն. բերեմ զլովսդ, ոններդ լվանամ:

— Եա՞տ լավ կանես, ա՞յ կնիկ, — ասում ա մարդը, — զաթի շարդված, բեզարած եմ:

Կնիկն էթում ա տնբտնքալոն պղինձը բերում, ուղում ա ածիք թեշտը, Աղդիլակը գտակը պտտում ա. պտտելու բաշտան էշը ալբիալը զոռում ա:

— Զո՞ր, — ասում ա Աղդիլակը, — ի՞նչ անում են՝ անեն, քո՞ ի՞նչ բանն ա:

— Ի՞նչ ա, խի՞ ես բարկանում իշխդ վրեն, — հարցնում ա տանտերը:

— Բա ի՞նչ անեմ, — ասում ա Աղդիլակը, — էշս ասում ա. «Էդ զուրը դեղած ա, տա՛րեք ածեք ֆորը, թազադան զուր դրեք տաշանած:

— Ա՛յ շանըմ, ա՞յ զողըմ, — ասում ա կնիկը, — դեղածս ո՞րն ա, զադս որն ա. ե՛ս եմ իմ ծեղովը պղինձը թամուզ լվացե, իմ ձեռովը զուրն ածե, տարե դափարթմիշ արե:

— Ա՛յ կնիկ, — ասում ա մարդը, — խի՞ ես հուզաթություն անում. բայի էդ էշը մի բան գիտա, որ ասում ա. տարե՛ք դեն ածեք է՛լի, դրանում ի՞նչ կա, որ խոսում ես:

Էդ կնիկը Աղդիլակի հեննա պղինձը վեր ա ունում, տանում տաք, եռման զուրը շըռուալեն լցնում ֆորը՝ դո՞ւզ էն մարդի գլխին, որ ընդե տափ էր կացե: Էդ խեղճ մարդը տեղն ու տեղը ալբիալը դիք ա շորանում:

—Ա՛յ Աղդիլակ աղպեր,—ասում ա կնիկը,—որ էս օյինը հաղացիր իմ գլուխը, դի էգուց թեզ վե կկացնեմ, օլում դի իշիդ վրեն, տար գեղիցը դուս, մի ղրաղ տեղ ֆորա՛, որ սաղ աշխարքումը իսաղկ ու խայտառակ լրլնենք:

—Ա՛շիւ վրեն,—ասում ա Աղդիլակը,—կտանեմ:

Հաց են ուստում, պրծնում, թեք են ընկնում, քնում: Բիրաղի քնում են, համա կնիկ՝ քունդ ըսկի կտա՞նի: Որդիան կտաներ, մահապարտ էր էլե, մնացե: Կես-գշերին կնիկը տենում ա, որ մարդը քնել ա, սուս ու փոս էթում ա Աղդիլակին բըռթում, վե կացնում: Աղդիլակը վեր ա կենում, էշը դուս քաշում, փալանը զնում վրեն, եննա պարանը քաշում ա, խաշված մարդին ֆորիցը հանում, զնում իշի վրեն, պարանով ղայիմ կապում: «Չո՛չ, հա շոշ, չո՛չ հա շոշ, շո՛շ հա շոշ», քշում ա էթում:

Էթում ա, էթում, շատն ու թիշն աստոծ գիտա, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, աքլորականչին հասնում ա մի գեղ: Էշը դուզ քշում ա դպա էդ գեղի կալերը: Էթում ա մի կալում վե գալի, բիրը վե տալի. իշի նոխտեն ղայիմ կապում բըրիցը, էթում մի խուրձ էլ ցորեն գողանում, բերում քցում իշի աղաքը, ինքն էլ կշտին թեք ընկնում, քնում: Էն բաշտեն էդ կալի տերը վեր ա կենում, շորերը հազնում, էթում, որ կալին ակը տա. համա մթնաժեռ ա ընում, աշքը զադ շի շոկում, էթում ա կպնում իշին, իշի վրիցը էն մեռելը զըրոմփալեն վեր ա ընկնում Աղդիլակի վրեն: Աղդիլակը էն սհաթը վեր ա կենում տեղիցը, ի՛նչ տենում՝ մի մարդ կողքին շիվարած կաննած ա, մեռելն էլ էն դիկը վեր ընկած ա:

—Վա՛յ քու տունը շբանդվի, ա՛յ մարդ,—գոռում ա Աղդիլակը,—էս ի՛նչ օյին հանեցիր իմ գլուխը:—Ասում ա ու «Վա՛յ, ա՛փի ջան» գոռալեն ընկնում ա էդ մեռլի վրեն:

—Էդ ո՞վ ա, ի՛նչ էլավ, —շիվարած հարցնում ա կալի տերը:

—Էլ ի՛նչ պտի ըլնի, տունս քանդվեց, զնաց. խեղճ հերս հիգանդ էր, ասեցի տանեմ հեքմի քցեմ: Էկանք, էկանք, մովթը գետինը կոխեց, ասեցինք՝ ըստե վե գանք, մի թիշ քնենք, զնշանանք, առավոտը էլ եդ վե կենանք, էթանք մեր ճամփեն: Հմի ես ի՛նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ, խեղճ հորս վե քցեցիր, բանֆոգի արիր. էս ա ես էլ կէթամ տանուտերին կկանչեմ, թո՛ղ զա, մեր դատաստանն անի:

—Ամմա՞ն, աղպեր,—ասում ա էդ կալի տերը,—ես քու ոտի

տակին մեռնեմ. էս եղներս, ըս էլ ցո՞րենս,— քոմմա քեզ, թաքըլի
տանուտերի կուշտը մի՛ էթա, բե ըստե մի տեղ թաղենք, որ մարդ
չհմանա:

Թոռն ի՞նչ կուզի՝ էրկու աշբ: Աղդիլակն էլ զաթի էս էր ուզում:
— Լա՛վ, — ասում ա, — թող քու ասածն ըլնի:

Թերում են ըստե մի տեղ քանդում, մեռելը թաղում: Եննա էդ
կալի տերը բերում ա Աղդիլակին քսան եղն ա տալի, քսան խալ-
վար ցորեն. ցորենը լցնում ա շվալները, բարձում եղները, ճամ-
փու գնում:

Աղդիլակն ա՛ եղները աղաք ա անում, գալիս ա, գալիս
ա, գալիս ա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մուշքը գետինը կոխում ա՛
հասնում ա իրանց գեղը: Էթում ա դո՞ւզ իրանց դուռը ծեծում: Մե-
րը դուս ա գալի, դուռը բաց անում, տենում՝ իրա տղեն: Վազում ա
ճոռվը փաթթվում, ջումտ թուշը պաշում, աշքերը պաշում, ուրա-
խանում, աշխարով մին ըլնում:

— Վա՛յ, Աղդիլակ ջան, — ասում ա, — ես քու էկած ճա՞մփին
մեռնեմ, արեկի՞դ մեռնեմ, աշքե՞րիդ դուրբան, դադեդ առնեմ,
բա՛լա ջան. էսքամ վախտ էս ո՞րդի իր:

— Ա՛յ մեր, — ասում ա տղեն, — հայ դրա վախտը չի. կաց եղ-
ները տուն անենք, բեռները վե գնենք, եղները դինշանան, մեղք են:

Ասում ա ու քշում, եղները տանում ներսեւ: Հերը էդ զալմաղալի
վրեն տանիցը դուս ա թոնում, տենում՝ զո՞րթ որ հրեն իրա տղեն,
եքա բոլ ու բարխանով էկել ա, հայաթի միշին վեր էկե:

— Ա՛յ հեր, — ասում ա Աղդիլակը, — ես քու մի եղն եմ մորթե,
ա՛ո էրես նրա տեղակ քսանք, քու էրկու խալվար ցորենն եմ կրակ
տղե, փշացրե, ա՛ո նրա տեղակ քսան խալվար:

— է՛հ, Աղդիլակ ջան, — ասում ա հերը, — դո՞ւ սադ ըլնես-
քեզ որ սաղսալամաթ տեհանք, հենց իմացանք սադ աշխարքը
լեզ:

Նո՞ր էթում են տուն, նստում, ասում-խոսում, մասլահաթ ա-
նում, իրար հալ հարցնում, ջան ասում, ջան լսում, ուտում, խմում,
քեֆ անում ընշանք դառը կես-գշեր. նոր թեք են ընկնում, քնում,
լավ-լավ էրազներ տենում:

Նրանք հասան իրա՞նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ք մու-
րազին: